# ՊԵՒՏԻՆԳԷՐԵԱՆ ՔԱՐՏԷԶ. ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՌԱՋԱՒՈՐ ԱՍԻԱՅԻ ՄԻՋՈՎ ԱՆՑՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՄԱՅԵԱԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

*Պեւտինգէրեան Քարտէզը չի կորցնում իր գիտական արժէքը։ Նրա արդիականութիւնը մեծանում է նրանով, որ այն շարունակում է բացայայտել իրենում թաքնուած գաղտնիքները, նոր տեղեկութիւններ նուիրելով հետազօտողներին։*

## ԱՐՏԱՇԱՏ-ՍԱՏԱՂ

*Մինչեւ վերջին ժամանակներս չէին արւում իդենտիֆիկացիան եւ տեղայնացումը՝ Արտաշատ-Սատաղ* (Satala) *ճանապարհի վրայ գտնըւող կայանակէտերի, որոնք ընկած էին* Adconfluentes *(Հասանկալայից յետոյ)* - Datamissa, Tharsidarate *եւ* Autisparate, *ինչպէս նաեւ* Lucus Basaro*յին յաջորդող* Aegea (RA Egea), Daruscinte *եւ* Salmalasso (RA Salmalassus)։

*Հետազօտողների վերջին ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ* Datamissa *կայարանը, որը Պեւտինգէրեան Քարտէզի վրայ նշուած է* Adconfluentes*ից 10 հռոմէական մղոն (15 կմ.) դէպի հարաւ հեռաւորութեան վրայ, կարող է նոյնացուել Բերդակ գիւղի հետ։*

*Մասնաւորապէս նման եզրակացութեան է յանգել Հայաստան-Պատմական Քարտէզի հեղինակ Թադէոս Հակոբեանը*[1]։

*Բերդակ գիւղը գտնւում է Երզրումից 19 կմ. հիւսիս-արեւելք իսկ Հասանկալայից*[2] *17 կմ. հիւսիս-արեւմուտք։ Ինչպէս ներկայացւում է, այն իր պարամետրերով պէտք է որ համապատասխանի* Datamissa*յին։*

*Ինչ վերաբերում է* Tharsidarate *եւ* Autisparate *կայարաններին, որոնք Պեւտինգէրեան Քարտէզի վրայ նշուած են մի գծի վրայ (առանց միմեանցից անջատող զիգզագի) ամենայն հաւանականութեամբ նրանք հանդիսանում ճանապարհի միեւնոյն հատուածի մաս, գտնւում էին Եփրատ գետի հակառակ ափերին (Արեւմտեան Եփրատ, արժ. Կարա-*

առել)՝ Tharsidarateն ձախ, իսկ Autisparateն աջ ափին: Հիւսիսը Divnik (Դիվնիկ) գիւղը ընդունվում է որպես Tharsidarate:

Յօգուտ այս նույնացման են վկայում կամրջի մնացորդները՝ Դիվնիկ[3] գիւղից ոչ հեռու, գետի ձախ կողմում: Անցյալում կամուրջը կրում էր այդ գիւղի անունը: Ըստ հետազոտողների, կամուրջը կառուցվել է մոտաւորապէս մ.թ. Դ. դարում: Ինչպէս երևում է նրա աւերակներից, այն եղել է քարէ եռակամար կառոյց և հռոմէական ժամանակաշրջանի կնիքն է կրել[4]:

Դիվնիկի միջով անցնող ճանապարհի յայտնաբերումը խարխլում է մեր նախկին պատկերացումները այդ մասում Արտաշատ-Սատաղ ճանապարհի ուղղութեան վերաբերեալ: Ինչպէս յայտնի է, Յակոբ Մանանդեանը և մի շարք այլ հետազոտողներ նույնացնում էին անցում Եփրատ գետի աջ ափը՝ այսինքն Colcidava (RA Chalchidara), որը համապատասխանում է արժեան Կարդարիչին[5]: Այս դէպքում Autisparateից մինչև Colcidava ճանապարհի հատուածը պէտք է, որ անցնէր Եփրատի ձախ ափով:

Եթէ Արտաշատ-Սատաղ ճանապարհի ուղղութիւնը Դիվնիկի միջով և համաձայն կամրջով ճիշտ ընդունենք, անհրաժեշտ կը դառնայ, որ Tharsidarateից (առ.՝ եռակամարաւոր) յետոյ այն անցնում էր Եփրատ գետի աջ ափով: Ինչպէս վկայում են պատմական փաստաթղթերը, միջին դարերում Եփրատի աջափնեայ ճանապարհները առևտրա-տնտեսական կարևոր նշանակութիւն ունէին- դա հիմնականում պայմանաւորուած էր նրանց՝ Սև ծովի նաւահանգիստների, գլխաւորապէս Տրապիզոնի հետ կապերով:

Միջին դարերում այս ճանապարհներից մէկում առանձնանում է առևտրական խոշոր կենտրոն Արծնը, որը ԺԱ- դարի հայ պատմաբան Արիստակէս Լաստիվերտցու խօսքերով կապեր ունէր «ծովի և ցամաքի հետ»[6].

Autisparateից (առ.՝ դրսում, կամ միւս ափում ամրացած) ճանապարհը արևմտեան ուղղութեամբ ձգւում էր դէպի Colcidava, որը գտնւում էր 12 հռոմէական մղոն (18 կմ.) հեռաւորութեան վրայ: Ինչպէս մատնանշում է Մանանդեանը, Colcidavaն և՛ իր անուանմամբ և՛ գտնուելու վայրով համապատասխանում է հայկական հեղոյն բնակավայր Ծաղ-Արփիին[7], որը ծանօթ է հին ժողովրդական խաղերի անուներից, որոնք պարում էին Գոհաստում և Դերջանէում (Դերջան):

Նիկողայոս Ադոնցի հետազոտությունները հաստատում են Մանանդյանի ենթադրությունների ճշտությունը։ Ադոնցը հիմնվելով անտիկ հեղինակների տված տեղեկությունների վրա նմանություն է տեսնում Դերջանում գտնվող Ալիս գետի՝ Alis, Haly-s (հայերեն աղ բառից) անվան և Խալյբների անվան մեջ։ Մասնավորապես նա նշում է, որ «Ստրաբոնը գտնում է որ Ալիս գետի անունը առաջացել է այն աղահանքերից, որոնք գտնվում էին նրա հոսանքի մոտ: Ստուգաբանորեն Ալիսին մոտ է Ալիզոնը, որը նույն գետի ափամերձ ապրող ժողովրդի անունն է, և որի մասին հիշատակում է Հոմերոսը: Ստրաբոնը մեջբերելով բանաստեղծի տողերը, ենթադրում է, թէ ալիզոնները հենց հին խալիբներն են, որոնք նրա ժամանակ կոչվում էին խալդեյներ…Հայերին հարևան խալիբներին Պլինիոսը անվանում է Armenochalybes, Chal-diñ, հատանօրէն, հայ խալիբների անվանումն է»[8].

Իր աշխատության մեջ այլ տեղում քննարկելով Հայերի ծագումնաբանությունը, Ադոնցը խալիբներին և խալդեյներին ներառում է այն ավելի քան 20 ազգությունների թվում, որոնք մասնակցել են հայ ժողովրդի կազմավորմանը։ Ըստ նրա, հայերը մեծացնելով իրենց տարածքը ի հաշիվ հարևան հողերի, ժամանակին խալիբներից և մոսինոյկներից[9] բռնի կերպով խլել են Կարենիտը (Կարին, արժմ Էրզրումի շրջան) և Դերջանը։

Հետազոտողներին չի հաջողվել նույնացնել Lucus Basaroից 15 հռոմեական մղոն (22,5 կմ.) հեռավորության վրա գտնվող Aegea կայանը։ Ինչպես ներկայացվում է, այն պետք է գտնվեր կամ Կարին-Տրապիզոնի ճանապարհին կամ էլ այդ ճանապարհի շրջանում։ Aegeaի անունը համահունչ է Եկեղյաց գավառի անվանը, որը գտնվում էր այդ վայրերում։ Որպես հայկական գյուղ Եկեղյաց գոյություն է ունեցել մինչև Ի. դարի սկիզբը[10]

Aegeaից ճանապարհը Կարին-Տրապիզոնից դեպի Satala (Սատաղ) ճանապարհից անցնում էր Darucinteի և Salmalassoի միջով և շարունակում արևմտյան ուղղությամբ։

Darucinteն նույնացման չի ենթարկվում։ Մանանդյանի փորձը՝ բացատրել նրա նշանակությունը ելնելով Դերջան-Derxene հնագույն անվանումից, համոզիչ չէ։

Ինչ վերաբերում է Salmalassoին, այն պետք է փնտրել Կարին-Տրապիզոն ճանապարհից շատ ավելի հեռու՝ հարավ-արևմուտք։ Ինչպես

կարելի է ենթադրել, Aegeaից և Darucinteից ճանապարհը «Կամար-կի-սաչրճանն» էր կազմում։

Աղոնցին այս տեղանքում յայտնի են Սիսամալանից անունով տեղանքը և քաղաքը։ Վկայակոչելով Զ. դարի բյուզանդական պատմագիր Պրոկոպիոս Կեսարացուն, նա որոշում է, որ Սիսամալանիքի գտնուելու վայրը Ծանիկի, Հայաստանի և Հռոմէական կայսրութեան սահմանագիծն է։ Մանաւորապէս, պատմաբանը գրում է. «Ճաների երկրում կայ Սքիմալանիքոն վայրը, որտեղ Յուստինիանոսը քրիստոնէութիւնը նոր ընդունած ճաների համար կառուցեց առաջին եկեղեցին: Այստեղ երկիրը բաժանւում է երեք մասի: Հենց այստեղ սկսւում եւ այստեղ էլ բաժանւում են հռոմէների, պարսկահայերի եւ ճաների սահմանները: Հենց այստեղ էր, որ Յուստինիանոսը կառուցեց Օրոն բերդը առաջինը այդ երկրում, եւ «որը խաղաղութեան սկիզբ ծառայեց, որովհետեւ այստեղից հռոմէները առաջին անգամ մուտք գործեցին Ճանիք»[11]. Ինչպէս կարելի է ենթադրել Օրոնը գտնւում էր Բայբերդից (Բայբուրտ) հարաւ-արեւմուտք։

Եթէ դատենք Պրոկոպիոս Կեսարացու նկարագրութիւնից, Սիսամալանիքը պէտք է որ ինչ-որ տեղ Բայբերդ-Սատաղի գծից հարաւ գտնուէր։ Այս կապակցութեամբ Աղոնցը նշում է. «Սատաղայից եւ Բայբերդից վերեւ տարածւում են երկար շղթայի օղակները», որոնք հնում կոչւում էին Պարխարեան կամ Պարիադրեան լեռներ[12]. Քանի որ Սատաղան եւ Բայբերդը, որոնք գտնւում էին վերոնշեալ շղթայի հարաւային լանջերին, Հայաստանի կազմում էին, հարկ է այդ լեռները բնական սահման համարել Հայաստանի եւ Ծանիկայի միջեւ։ Ծաների երկիրը գտնւում էր այդ լեռներից դէպի հիւսիս։ Յատկանշական է, որ Պարխարեան լեռները, որոնք Պեւտինգէրեան Քարտէզում նշւած են Mons. Paruerdes անուանմամբ, Արտաշատ-Սատաղ ճանապարհից հիւսիս են նշւած։

Ինչպէս ներկայացւում է, Պեւտինգէրեան Քարտէզի Salmalassoն էլ անուամբ էլ գտնուելու վայրով համընկնում է Պրոկոպիոս Կեսարացու Սիսամալանիքի հետ։

Salmalassoից հարաւ-արեւմուտք, նրանից 20 հռոմէական մղոն (30 կմ.) հեռաւորութեան վրայ գտնւում էր Satalaն (հայ.՝ Սատաղ, այժմ Սադակ)։

## ԱՐՏԱՇԱՏ-ԷԿԲԱՏԱՆԱ

Հետազոտողներից ոմանք բավարար հիմքեր ունենալով բացայայտում են, որ Մանանդյանը սխալվել է Catispi կայարանը նմանեցնելով Օրդուբադ բնակավայրի հետ[13]։ Ինչպես պարզվում է, և՛ այդ նույնացումը և՛ փորձն Էկբատանա-Արտաշատ ճանապարհը ուղղել Կողովիտ շրջանով, ձեռնարկուել էին անտեսելով այդ ճանապարհի դարեր շարունակ պահպանուած երթուղին Ջուղայով (Ջուղա) իսկ այնուհետև Արաքսի ձախ ափով դէպի Արտաշատեան դաշտավայր։ Այս ճանապարհը երկար ժամանակներ յուսալին է համարուել։

Արաքսով անցնող ճանապարհի և Ջուղայի հետ մի հին հայկական աւանդութիւն է կապուած։ Այդ ճանապարհով Աղեքսանդր Մակեդոնացին Ջուղայի մօտ գետանց (կամուրջ կամ լաստ) է կառուցել։ Դէպքերը, որոնք իրենց արտացոլումն են գտել աւանդութեան մէջ իրականում տեղի են ունեցել։ Դրանք զուգորդւում են այն փաստի հետ, որ Աղեքսանդր Մակեդոնացին զինուորական ջոկատ էր ուղարկել Հայաստան ոմն Մենոնի ղեկավարութեամբ՝ Սիսպիրիտիսում (Սպեր) ոսկու հանքերը գտնելու նպատակով։ Այս մասին պատմող Ստրաբոնը նշում է, որ տեղի բնակիչները սպանում են ջոկատի հրամանատարին և ցրում յոյներին[14]։

Հայ պատմական գրականութեան մէջ Ջուղայի մասին տեղեկութիւններ առաջին անգամ յայտնում է Մովսէս Խորենացին։ Պատմելով Տիգրան Բ-ի (96-56) կողմից Աժդահակի առաջին կնոջ՝ Անուշի, իր ազգականների և գերիների հետ միասին դաստակերտում (կալուածներ) «...եւ զերիս աւանսն, զԽրամ եւ զՋուղայ եւ զԽորշակունիս իսկ ի միւս կողմանէ գետոյն»[15], այսինքն՝ Արաքսի աջակողմեան ափին։

Ստրաբոնի բերած փաստերից, ինչպէս նաև Խորենացու պատմութեան կոնտեքստից երևում է, որ Ջուղայով տարանցիկ ճանապարհներ էին անցնում։

Որպէս հաստատում Արտաշատ-Էկբատանա ճանապարհի Ջուղայի միջով անցնելու հնարաւորութեան թեզի, նպատակայարմար է համադրել Պլինիոս Աւագի նշած այդ ճանապարհի Արտաշատից մինչև Գանձակ-Շահաստան հատուածի հեռաւորութիւնը Պեւտինգէրեան Քարտէզում նշուած միևնոյն հատուածի հեռաւորութեան հետ։ Ըստ Պլինիոս Աւագի, Արտաշատից Գանձակ-Շահաստան ճանապարհի հեռաւորութիւնը, որով մ.թ.ա. 36ին Մարկոս Անտոնիոսի զօրքերն անցել են Միդ-

խու, 450 ստադիոն է[16], որը ժամանակակից համապատասխանում է 366 կմ-ի: Ըստ Պեւտինգերեան Քարտէզի, ճանապարհի այդ հատուածի հեռաւորութիւնը հաւասար է 345 կմ-ի: Ինչպէս տեսնում ենք երկու աղբիւրների հաղորդած տւեալների միջեւ տարբերութիւնն աննշան է:

Ինչ վերաբերում է մինչեւ Արտաշատ հեռաւորութեանը՝ Կոգովիտի միջով (Հաշուելով Մարանդից), ապա այն պէտք է որ ամենաքիչը 150 կմ-ով աւելի լինէր քան հեռաւորութիւնը Ջուղայի միջով:

Այդ վայրերում մ.թ.ա. Բ. դ. տարածքին ճանապարհների գոյութեան մասին են վկայում Կլաւդիոս Պտղոմէոսի Ասիայի Երրորդ Քարտէզում նշուած Morunda (Մարանդ) եւ Naxuana (Նախիջեւան) կայանակէտերը: Անդրադառնալով Կլաւդիոս Պտղոմէոսի գործունէութեանը՝ Հայաստանում, Երեմեանցն նշում է, որ Արտաշատ լեռից արեւելք ընկած վայրերով անցել են մարդիկ «որք բազմաշրջութեամբ հրամանաւ Պտղոմեայ ապարիսօր զննակարիւն մարդկան չափեցին»[17]: Կասկած չի կարող լինել, որ Արտաշատից արեւելք ընկած վայրերից էր Ջուղան, որը գտնւում էր այդ ճանապարհի Մարանդ եւ Նախիջեւան հատուածի միջեւ:

Հայկական աղբիւրներից - որոնք յիշատակում են Ջուղան - միայն Կլաւդիոս Պտղոմէոսի Ասիայի Երրորդ Քարտէզից, Պեւտինգերեան Քարտէզից եւ Երեմեանցու աշխատութիւնից յետոյ, արժէ նշել Ը. դարի պատմագիր Ղեւոնդին: Պատմելով Ջուղայի մասին Ը. դարի իրադարձութիւնների կոնտեքստում, նա յայտնում է, որ «արաբական զօրքերը գրաւեցին մարդի աւանները, Գողթանի շրջանը եւ Նախիջեւան դաստակերտը - Այնուհետեւ պատմիչը նշում է, որ գերիներին- անցկացրեցին Երասխ գետը Ջուղայի հանդով»[18] դէպի Իրան:

Ինչպէս ներկայացւում է, Ջուղայի մասին յիշատակումը Ե.-Ը. դդ. Իրանում եւ Հայաստանում համաշխարհային առեւտրի աշխուժացման ժամանակաշրջանում Զ.-Է. դ. սկզբում իրանա-բիւզանդական մի շարք պատերազմներից յետոյ, վկայում է այդ կայանակէտի՝ Ասիայից Եւրոպա տանող ճանապարհների գծի վերակենդանման մասին:

Որոշ հարցեր՝ կապուած Էկբատանա-Արտաշատ ճանապարհի ուղղութեան հետ, դեռեւս կասկածներ են յարուցում հետազօտողների մօտ: Այսպէս, Հիւպշը հարց է բարձրացնում Պեւտինգերեան Քարտէզի վրայ Zeracanaի տեղադրութեան վերաբերեալ Zeracana-Rapsum-Tumerta ուղեմասում, վկայակոչելով Անանուն Ռաւեննացու տեղեկութիւնները:

*Ինչպէս յայտնի է աշխարհագրական անունների տարընթերցութիւնները Ռաւեննացու Տիեզերագրութեան մէջ օգնում է պարզել Պեւտինգէրեան Քարտէզի վրայ գտնուող մի շարք քաղաքների եւ կայանատեղերի անուանումները: Այս դէպքում եւս հնարաւորութիւն է ընձեռնում պարզաբանել որոշ անպարզութիւններ:*

*Հիւպըրը, ընդունելով* Zeracanab *որպէս Նոշիրական (Շիրական), տեղադրում է այդ կայանը Ուրմիա լճի (Կապուտան)*[25] *հարաւում: Դրանով նա կասկածի տակ է դնում Մանանդեանի որոշած Էկբատանա-Արտաշատի ուղղութիւնը Ուրմիա լճի արեւելեան ափով: Հիւպըրը գտնում է, որ Միջին ժամանակներում Էկբատանա-Արտաշատ երթուղին անցնում է Ուրմիա լճի արեւմտեան ափով*[26].

Zeracanab *անուան հետ կապուած Ադոնցն ունի հետեւեալ նկատառումները՝* «Փաւստոսի խօսքերի իմաստից հետեւում է, որ Նոշիրականը, Մահկերտը, Նիխորականը եւ Դասանը գտնւում էին լճի միւս կողմում, պէտք է ենթադրել որ Նոշիրականը քաղաքական տերմին էր՝ ճշելու համար Աղշարէճի սահմանին մօտ գտնուող Արշակունիներին ենթակայ գաւառները, իսկ Նիխորականը նոյն է Ատրպատականում գտնուող նրանց կալուածքների նոյնանիշ ընդհանուր անունը»[28].

*Ադոնցի այս նկատառումները թոյլ են տալիս լոյս սփռել Հիւպըրի բարձրացրած հարցի վրայ: Ամէն ինչ իր տեղը կ՛ընկնի, եթէ մենք* Zeracanab *որպէս Նիհորական ընդունենք եւ դրանով իսկ հաստատենք որ Էկբատանա-Արտաշատ ճանապարհն անցնում էր Ուրմիա լճի արեւելեան ափով:*

*Անանիա Շիրակացին յիշատակում է Նիհորական լեռները Կոհ-ի-Նիհորական անունով Պարսկահայքի արեւելեան մասում, որոնք* «տարածւում են մինչեւ Տաւրոսեան լեռները»[29].

*Վկայակոչելով արաբ հեղինակներին, Ադոնցը մատնանշում է նրանց ծանօթ անդամը՝ Դեհ Նախիրականը* «այժմեան Դիխերականն է Ուրմիա լճի արեւելեան ափին, Թաւրիզից հարաւ»[30]: *Ստուգաբանօրէն Դեհարկանը աւելի համահունչ է Ռաւեննացու* Zeracanab *հետ: Վերոնշեալ փաստերից ելնելով* Zeracanab *նոյնութիւնը Նիհորականի հետ բաւականաչափ ճշգրտօրէն է արտայայտւում:*

*Ժամանակին Պեւտինգէրեան Քարտէզի հրատարակիչ եւ մեկնաբան Կոնրադ Միլլերը ինչպէս նաեւ մի շարք այլ գիտնականներ*[31] *իրենց կասկածն էին յայտնում, որ Արտաշատ-Տիգրանակերտ ուղին անցնում է*

Բագաւանից՝ Հարքի, Ապահունիքի եւ Տարօնի միջով։ Օրինակ Միլլերը այդ ուղին նոյնացնում էր Արճէշով եւ Բերկրիով, այնուհետեւ Վանայ լճի հարաւային ափով դուրս գալով Ոստան եւ Դաթուան։ Այլ գիտնականներ առաջարկում էին այն տանել Վանի արեւելեան ափով[35]։ Բոլոր դէպքերում էլ հետազօտողների առաջարկները անտեսում էին Հարքով, Ապահունիքով եւ Տարօնով անցնող ճանապարհները։ Նոյն տեսակէտն ունի նաեւ Հիւսէնը, որն անտրամաբանական է համարում այս վայրերում ճանապարհների օգտագործումը, որոնք ձգւում են «խառտուղ տարածքով անցնող վայրի լեռնցիներով բնակեցուած ճեղանցքում»[36]։

## ԱՐՏԱՇԱՏ-ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհը համեմատաբար քիչ է ուսումնասիրուել։ Նրա կայարաններից շատերը տեղ չեն գտել վաղ ժամանակուայ քարտէզներում եւ պատմական փաստաթղթերում։ Այդ առումով քիչ թէ շատ որոշակի, բայցեւայնպէս երկրորդական տեղեկութիւններ են պարունակում անտիկ եւ արաբական աղբիւրները։ Ըստ այդ աղբիւրների, առեւտրական քարաւանները Միջագետքից Հայաստան էին գալիս Եդեսիայով եւ Ամիդով դէպի Տիգրանակերտ[37] տանող ճանապարհներով, իսկ Մծբինով եւ Արզնով՝ դէպի Արճէն (ըստ անտիկ հեղինակների Արզան, Արզանենա)[38]։

Տիգրանակերտից եւ Արճէից ճանապարհները հիւսիս էին տանում նեղանցքով, որը միջին դարերում ստացաւ Բիթլիսեան (Բաղեշեան) նեղանցք անուանումը։ Այն Վանայ լճի արեւմտեան ափերին ընկած ճանապարհներով հարաւային Հայաստանը միացնում էր իր կենտրոնական տարածքներին։ Այդ ճանապարհներից մէկն էր այսպէս կոչուած «Թագաւորական պողոտան»։

Դաթուանում այդ ճանապարհները ճիւղաւորւում եւ Վանայ լճի հարաւային ափով տանում էին Վասպուրական (Կլաւդիոս Պտղոմէոսի Ասիայի Երրորդ քարտէզում Daudyana, աւելի հին աղբիւրներում Դուկկիամմա քաղաքը)[39]։ Այստեղից նրանք շարունակւում էին դէպի Ոստան եւ Վան քաղաքները Վասպուրականը, ինչպէս նաեւ Նոր Շիրականը (Պարսկահայք) Հիւսիսային Միջագետքից եւ Ատրպատականից Հայաստան մուտք գործող աւանդական ճանապարհներից մէկն էր։

Դաթուանից կարելի էր առանց Վան մտնելու, անցնելով Ոստանով, անմիջապէս մտնել Վասպուրականի կենտրոնական եւ հարաւային

շրջանները: Հայոց ձոր (ներկայումս՝ Խոշաբ) շրջանով ճանապարհները անցնում էին Մեծ Աղբակ շրջանի կենտրոն՝ Ադամակերտ: Այնտեղից նրանք տանում էին Զարեհավան:

Մ.թ.ա. Ա. դ. բուն Հայաստանի և Վասպուրականի միջև եղած կապերի մասին որոշակի պատկերացումներ են տալիս Բարթուղիմէոս առաքյալի քարոզչության ճանապարհները: Սկզբում Սյունիքից նրա ուղին Այրարատով և Ատրպատականով շարունակվում էր դեպի Վասպուրական՝ Մեծ Աղբակի շրջան: Ինչպես տեղեկացնում է Խորենացին, Բարթուղիմէոսի առաքելությունը տեղի է ունեցել Արեւբանոսում:

Այս բնակավայրը հիշատակվում է նաև մեկ այլ հայկական աղբյուրում՝ Յայսմաւուրքում[30], և ըստ հայ և եվրոպական գիտնականների հետազոտությունների, այն տեղադրվում է Ադամակերտի շրջակայքում գտնվող սուրբ Բարթուղիմէոս եկեղեցուց ոչ հեռու[31]:

Բարթուղիմէոս առաքյալի քարոզչության ուղին մատնանշում է Վասպուրականի, Ատրպատականի և Այրարատի միջև հին ճանապարհների առկայությունը, որոնք - պէտք է ենթադրել - Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհի մի որոշակի հատվածն էին կազմում:

Տիգրանակերտից Արտաշատ ընկած ճանապարհի առաջացման և զարգացման պայմանների բացահայտման համար նպատակահարմար է Տիգրանակերտի, որպես Հայաստանի առևտրա-տնտեսական և մշակութային կենտրոնի, առեղծման և զարգացման ժամանակահատվածի ճշտումը: Ինչպես հայտնի է, մ.թ.ա. 69թին Լուկուլլոսի կողմից Տիգրանակերտի բռնագրավումից և խախճախումից հետո Տիգրան Բ.ի կայսրությունը փլուզվեց: Տիգրան Բ.ի մահից հետո (55 թ.) Տիգրանակերտը դադարեց Հայաստանի մայրաքաղաք լինելուց: Տիգրանակերտի հետագա քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի վրա բացասական ազդեցություն ունեցան պատերազմները, որոնք մղվում էին հռոմեացիների և պարթևների միջև, քաղաքի յարակից շրջաններում:

Կյանքը Տիգրանակերտում քիչ թե շատ կայուն բնույթ է ստանում Արշակունիների (Բ.-Դ.դդ.) թագավորության շրջանում: Տակիտոսի վկայությամբ, մ.թ. Ա. դարում Տիգրանակերտը համեմատաբար խոշոր քաղաք է եղել[32]: Հռոմէական, պարսկական, հայկական և այլ աղբյուրները տեղեկացնում են Ա.-Բ. դարերում Հռոմի և Պարթևստանի միջև կապերի աշխուժացման մասին:

Բ.-Գ. դարերում Պարթևստանի փլուզման հետևանքով, Առաջաւոր Ասիայում սկսեց թուլանալ համաշխարհային առևտուրը: Հաջորդ

շրջանում այն յայտնւում է ճնշման մէջ, որը շարունակւում է համարեա ողջ Դ. դարում (այն համընկել է Հռոմէական կայսրութեան ստրկատիրական շարժման ճգնաժամի հետ)։

Փաստերը ցույց են տալիս, որ Տիգրանակերտ-Արտաշատ ճանապարհը նորից սկսել է գործել Դ. դարի վերջ-Ե. դարի սկզբին՝ Բիւզանդիայի եւ Սասանեան Պարսկաստանի միջեւ առեւտրի վերականգնման շրջանում։ Յայտնի է, որ 388ին պարսիկները Տիգրանակերտը յանձնեցին Հայաստանում գահին նստած Տրդատ Դ.-ին[33]։

Մանրակրկիտ փաստարկներ կան յօգուտ այն բանի, որ Դ. դարի առաջին կէսին Տիգրանակերտ-Արտաշատ ճանապարհի երթեւեկութեան աշխուժացումը պայմանաւորուած էր այն ժամանակւայ համաշխարհային ուղիները դէպի Կոնստանդնուպոլիս կողմնորոշելու միտումով։

Դա են մասնաւորապէս մատնանշում Պեւտինգէրեան Քարտէզի վրայ տեղ գտած Տիգրանակերտ-Արտաշատ ճանապարհի ուղղումը (կրճատումը) Բասենից մինչեւ Molchia (Զօրայիր) այնուհետեւ դէպի Զարեհաւան՝ շրջանցելով Աղամակերտը հիւսիս-արեւմուտքից։

Դրանից յետոյ Տիգրանակերտ-Արտաշատ ճանապարհը երկար չգործեց։ Այն դադարեց գոյութիւն ունենալ 387ին Հայաստանի՝ Հռոմէական (Բիւզանդական) կայսրութեան եւ Իրանի միջեւ բաժանումից յետոյ, երբ Տիգրանակերտը գտնւելով Իրանի եւ Բիւզանդական կայսրութեան (բիւզանդական գոտում) սահմանների միջեւ կտրուեց Հայաստանի կենտրոնից, ինչպէս նաեւ Տիգրանակերտ-Արտաշատ եւ Տիգրանակերտ-Մծբին ճանապարհների վերջնակէտը (տերմինալ) լինելու նշանակութիւնը՝ վերածուելով մի սովորական բերդաքաղաքի։

Հետազօտողները առաջարկում են ուղիների մի քանի տարբերակ[34], որոնք անցնում են Կուր (Քուռ) գետի աւազանով։ Դրանցից ուշադրութեան է արժանի ճանապարհը դէպի Teleda (RA Telada), որն ընդունում են որպէս Թբլիսի Աւենայի համանմանութեամբ, Teledaն համապատասխանում է Թբլիսիին, որը Վրաստանի տարածքի հնագոյն բնակավայրերից է։ Պատմական յուշարձանները վկայում են, որ Թբլիսին Ե.-Զ. դարերում քաղաքային բնակավայր է եղել[35]։ Պեւտինգէրեան Քարտէզի վրայ Teledaի անուան կողքին երկու աշտարակների նշումը վկայում է այն մասին, որ այնտեղ է հիմնադրուել Վրաստանում առաջին եկեղեցական հաստատութիւններից մէկը։

Ինչ վերաբերում է Կուր գետի աւազանի ճանապարհներին, ինչպէս նաեւ շրջանցիկ ճանապարհին ամբողջութեամբ, դիտարկւում են Պեւ-

տինգէրեան Քարտէզը կազմողների դեռեւս վաղ ձգտումները՝ օգտագործել քարտէզի վրայի դատարկ կամ կիսադատարկ տեղերը այլ ճանապարհների սխեմաների գծագրման նպատակով։ Ինչպէս կարելի է նկատել, քարտէզում շրջանցիկ ճանապարհի սխեման միջանկեալ դրւում է աշխարհագրական եւ էթնիկական անուան վրայ, որի հետեւանքով սխեմայի վրայ նշուած քաղաքների եւ կայանակէտերի անուանումները չեն համապատասխանում այդ անուանումների հետ։ Ակնյայտ է, որ հետազօտողներից ոմանք, հիմք ընդունելով այդ անուանումները, սխալ ենթադրութիւններ են անում կապուած շրջանցիկ ուղով անցնող ճանապարհների ուղղութեան հետ Արեւելեան Անդրկովկասի ինչպէս նաեւ Հիւսիսային Իրանի մի շարք շրջանների միջով։

Ժամանակին Միլլէրը առաջարկում էր ուղղել շրջանցիկ ուղին Օրդուբադով (Նախիջեւանի շրջանում)[36], ընդունելով այն որպէս Sanora, այնուհետեւ դէպի Թաւրիզ, Գեանջա (Գանձակ) եւ Cyropolis (Թալիշի ժառանգայրում)։ Այնտեղից ուղին պէտք է ձգուէր Աստարայով եւ Լենքորանով իսկ այնուհետեւ Արաքս գետի աւազանով կրկին դէպի Օրդուբադ եւ Արտաշատ։

Վ. Բեյկը նոյնացնում է Նորաշէնը Sanora-ի հետ (Շարուրի շրջան)[37]։

Ամբողջութեամբ նման տեսակէտի կողմն է նաեւ Մուրատովը, որին վկայակոչում է Հիւսմեն[38]։ Ըստ որում, վերջինս չի ընդունում Մարկուարտի այն տեսակէտը, որն ընդունուել էր Մանանդեանի կողմից, համաձայն որի շրջանցիկ ուղին դուրս էր գալիս Արտաշատից եւ աւարտւում էր վերջնական կայան Մցխէթում, որտեղից էլ նա էր շրջւում դէպի Արտաշատ։ Ինչպէս արդէն նշուել է, Արտաշատից Վրաստան ճանապարհները անցնում էին Աղստեւ գետի կիրճով եւ հասնելով Մցխէթ վերադառնում էին Հայաստան Դեբէդ գետի կիրճով։ Այսպիսով շրջանցիկ ուղին սահմանափակւում էր Հայաստանի եւ Վրաստանի սահմաններով։

Մուրատովի մեկնաբանութիւնները՝ Կուր գետի աւազանի մի քանի ճանապարհների (ինչպէս նաեւ ճանապարհների դէպի Ալբանիա) գոյութեան վերաբերեալ, քննադատութեան չեն դիմանում։

### ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՏԵՂԸ

Վերջին ժամանակներս կասկածի տակ է դրւում Տիգրանակերտի՝ Նփրակերտի (Նփրկերտ) շրջանում գտնուելու տեղը, որն ընկնում է Ամիդի (այժմ՝ Դիարբեքիր) եւ Բաթման (Քաղիրթ) գետի միջեւ։

Մանանդեանի նման տեսակէտ է արտայայտում նաեւ Բաբկեն Յարութիւնեանը իր Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը ըստ «Աշխարհացոյցի»[39] մենագրութեան մէջ։ Նա տեղադրում է Տիգրանակերտը Արզն շրջանում, Ֆարղան գետի մօտ։

Ի հիմնաւորումն իր տեսակէտի, Յարութիւնեանը մէջբերում է Ապպիանոսի հետեւեալ խօսքերը՝ «Տիգրան Բ.ն պատանդությունից ազատվելով և երկիր վերադառնալով, իր գլուխը արքայական թագով պսակեց այն վայրում, որտեղ նա յետագայում հիմնեց իր Տիգրանակերտ մայրաքաղաքը»[40]։ Ամենայն հաւանականութեամբ Ապպիանոսի հենց այս ուղերձ-ծանուցումն էր, որն խրախուսեց գնալու պարզաբանման հարցին, ընդհուպ Յարութիւնեանի կոնցեպցիայի հիմքում, քան որի Պեւտինգերեան քարտէզում Արտաշատ-Տիգրանակերտ ուղին անցնում է ոչ թէ դէպի արեւմուտք՝ Բաթման գետից մինչեւ Արեւմտեան Տիգրիս Ամիդի մօտ, այլ դէպի հարաւ-արեւելք՝ Արզնի շրջան։

Յարութիւնեանի տեսակէտը հիմքից զուրկ է այն պատճառով, որ Առաջաւոր Ասիայի այդ շրջանում այն աղաւաղում է ուղիների սխեման, դրանով խախտելով ոչ միայն Տիգրանակերտ-Արտաշատ ճանապարհի ուղղութիւնը, այլեւ Տիգրանակերտ-Մծբինեանը, որն ինչպէս Պեւտինգերեան քարտէզն է տեղորոշում անցնում է Ամիդի միջով։

Յարութիւնեանի՝ իր տեսակէտը հիմնաւորելու փորձերը յանկերգին նման, որ նա անխնայ գծում է անվիճելի ճշմարտութիւնների աղաւաղմանը։ Այսպէս՝ Nararra կայարանը, որն ըստ Պեւտինգերեան քարտէզի գտնւում է Ամիդի հետ անմիջական հարեւանութեամբ, նա նոյնացնում է Նփրկերտին[41], որը համաձայն հնագոյն աղբիւրների նորից մէկի գտնւում էր Տիգրանակերտի տեղում։ Յարութիւնեանը Բաթման գետը համարում է սահմանային գիծ Ծոփքի (Մեծ Ծոփք) եւ Արզնի[42] միջեւ, դրանով այն փոխարինելով Նիմֆիոս գետի հետ։ Յարութիւնեանը Thalbasaris (Թելբաշա) կայարանը, որը համաձայն աղբիւրների ըստ Արեւելեան Տիգրիսի ձախակողմեան առափն է ապրում, նոյնացնում է Բասորիկի հետ[43]։ Ըստ Յարութիւնեանի Բասորիկը գիւղ է Արզնի շրջանում[44]։

Յարութիւնեանը յաճախ ոչ-ճիշդ է մեկնաբանում Պեւտինգերեան քարտէզը։ Մանանդեանը դա արտայայտում է Տիգրանակերտին մօտ գտնուող կայարանների որոշման ժամանակ։

Պեւտինգերեան Քարտէզի Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհի հատուածում Դաթուանից (Datansana), Գզլանից (Gilzanas) եւ Քըյմհարից (Cymiha) այն կողմ նշուած է Zanserio (RA Zancerion) կայարանը, որը գտնւում է Tigranocarten-ից (Տիգրանակերտ) 30 հռոմ. մղոն (45 կմ.) հեռաւորութեան վրայ: Zanserio-ն ոչ այլ ինչ է քան Դաթուան գետի արեւելեան վտակներից մէկը՝ ինչպէս Սանասոյ, Սասնոյ գետը (Zanserio, Zance rion հայերէն՝ Սասնոյ ջուր)[65]: Այդ կայարանը վճռական դեր էր գրաւում, քանի որ այն որպէս անցում էր ծառայում Բաթման գետով[66]: Նրանով էր անցնում Տիգրանակերտ եւ Ամիդ տանող ճանապարհը:

Յատկանշական է, որ Յարութիւնեանը ինքը դժուարանում է որոշել Zanserio կայարանը Մխեւրոյի ժամանակ նա չի ընդունում Մանանդեանի մեկնաբանութիւնը՝ այդ կայարանի վերաբերեալ: Այդ կապակցութեամբ նա նշում է. «Յ. Մանանդեանի նման մենք եւս դժուարանում ենք որոշել Zanserio կայարանի սկզբնական հայերէն անուանումը: Միաժամանակ գտնում ենք, որ մեծանուն պատմաբանի կողմից Zanserio-ն Zoniqart սրբագրելը եւ Չինկերտի հետ կապելը ոչնչով փաստարկուած չէ եւ ոչ էլ հաւանական»[67]:

Ըստ Պեւտինգերեան Քարտէզի, Տիգրանակերտից դէպի արեւմուտք ամենամօտ խոշոր կայարանը adTygrem-Ամիդն է: Ըստ քարտէզի վրայ նշուած կայարանների միջեւ հեռաւորութեան (15+14+13=42 հռոմ. մղոն), այն Տիգրանակերտից 63 կմ.-ով հեռու է մնում:

Նմանօրինակ թուեր են բերւում նաեւ հռոմէա-բիւզանդական աղբիւրներում: Ըստ Պրոկոպիոս Կեսարացու՝ «...Մարտիրոպոլսից քաղաքը գտնւում է Սոփանենա կոչուող շրջանում Ամիդից դէպի հիւսիս եւ նրանից 240 ստադիա հեռաւորութեան վրայ: Այն ընկած է Նիմֆիոս գետի վրայ, որը բաժանում է հռոմէական հողը պարսկականից»[68]: Համապատասխան՝ ստադիայի ընդունուած չափի (185մ), այս հեռաւորութիւնը կազմում է 44,4 կմ.: Իր աշխատութեան մէկ այլ տեղում Պրոկոպիոս Կեսարացին այլ տեղեկութիւններ է հաղորդում. «Նիմֆիոս գետը հոսում է Մարտիրոպոլիսի մօտով եւ Ամիդից գտնւում է մօտաւորապէս 300 ստադիոն հեռաւորութեան վրայ»[69], այսինքն 55,5 կմ.-ով, որը ամբողջութեամբ համապատասխանում է Պեւտինգերեան Քարտէզի տեղեկութիւններին:

*Ինչպէս արդէն նշել ենք, Տիգրանակերտից հարաւ-արեւելք Տիգրանակերտ-Մծբին ճանապարհին նշուած է* Thalbasaris *կայարանը, որն ընկած է 15 հռոմ. մղոն (22,5 կմ.) հեռաւորութեան վրայ: Այն նոյնացւում է Մելքաշայի հետ*[50].

*Ասորական աղբիւրները յայտնում են, որ Դ. դարում այդ բարձունքին տիրում էին պարսիկները: Բիւզանդացիները ձգտում էին նրա վրայ բերդ կառուցել, սակայն Կաւադ թագաւորի (թագաւորել է 488-496 եւ 498-531) ուղարկած զօրքերը ստիպեցին նրանց նահանջել: Համաձայն տեղեկութեան, պարսիկները կառավարում էին* «Արզանենա երկրամասի արեւելեան սահմանը՝ Մելքաշայից մինչեւ Մայֆերկատ (Մարտիրոպոլիս)»[51].

*Պէտք է նշել, որ «Արզանենայի երկրամասն ասելով Զ. դարի ասորացի հեղինակները նկատի ունէին Աղձնիք գաւառի հարթավայրային մասի անուանման ձեւը* (Arsanenae), *որը Անգեղտունն եւ Նփրկերտի հետ միասին 298ի Մծբինի պայմանագրով անցնում է հռոմէական զօրքերի տիրապետութեան տակ: Ըստ Հայաստանի բաժանման պայմանների, 387ին Աղձնիք գաւառը, բացառութեամբ Աղձն շրջանի (ասորական աղբիւրներում Արզոն) անցաւ Հռոմէական (Բիւզանդական) կայսրութեանը:*

*Այս բոլորից երեւում է, որ բիւզանդացիների եւ պարսիկների միջեւ սահմանը այդ վայրերում անորոշ էր (որը դիտարկւում է ասորական աղբիւրների հաղորդած տեղեկութիւնների կոնտեքստում): Նմանօրինակ խառնաշփոթը թոյլ էր տալիս երկու կողմերին էլ ժամանակ առ ժամանակ հողային պահանջներ ներկայացնել, որոնք ընկած էին Նփրկերտ գետից (մինչեւ նրա՝ Արեւմտեան Տիգրիս թափուելը) մինչեւ Արձն սարաձգում: Ընդ որում ասորացի հեղինակները յստակ տարբերակում են «Արզանենայի երկրամասը» «Արզան երկրից»*[52].

*Այս կապակցութեամբ անհրաժեշտութիւն է առաջանում պարզութիւն մտցնել Արզանենէ-Աղձնիքի մասին Բուզանդի տուած տեղեկութեան մէջ: Ցարութիւնեանի կարծիքով* «Նփրկերտ-Տիգրանակերտ նոյնացումը նաեւ հակասում է Բուզանդի տեղեկութիւններին: Պատմիչի հաղորդմամբ, Շապուհ Բ. թագաւորի զօրքերը «առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի գաւառին Աղձնեաց, իշխանութեան բդեշխին... եւ ինքեանք ի Ծոփս Մեծ արշաւեցին»[53].

*Մենք ենթադրում ենք, որ Բուզանդի այս տեղեկութեան իմաստն այն է, որ գաւառին Աղձնեաց ասելով նա ի նկատի ունէր անունն հեղի-*

նակների Արզանենան՝ այսինքն Աղձնիք գաւառի հարթավայրային մասը։ Հենց այդ ճամփով էր անցնում Մծբին-Տիգրանակերտ ճանապարհը, որով էլ որպէս կարճ երթուղի Մծբինից՝ պարսկական թագաւորների այն ժամանակուայ ռազմակայաններից դէպի Միջագետք էին շարժւում Շապուհ Բ-ի զորքերը Thalbasarisով եւ Tigranocartenով դէպի Մծբին։

Պեւտինգերեան Քարտէզի վրայ Տիգրանակերտին մօտ գտնուող Zanserio, adTygrem եւ Thalbasaris կայարանների իդենտիֆիկացիան եւ տեղայնացումը օգնում են որոշել դէպի այն բերող ճանապարհները։ Ինչպէս արդէն նշուել է, արեւելքից Տիգրանակերտ բերող ճանապարհ էր ծառայում Zanserioից եկող ճանապարհը, արեւմուտքից՝ Ամիդից եկող ճանապարհը, իսկ հարաւից՝ Thalbasarisից եկող ճանապարհը։ Այս կայարանները յստակօրէն մթադնում են Տիգրանակերտի դիրքը Պեւտինգերեան Քարտէզի ճանապարհների սխեմայում։

Յարութիւնեանը խարխլում է սխեման, Անանուն կայարանը բնորոշելով Ամիդի տեղը, որը գտնւում է Արեւմտեան Տիգրիսի աջ ափին։ Յարութիւնեանի այս փաստարկումը, որ Անանուն կայարանի մօտ նշուել են երկու դրանայր աշտարակներ, որոնք իբրեւ թէ ապացուցում են նրա նոյնութիւնը Ամիդին, իրականում փաստում է նրա նոյնութիւնը Անգղի հետ։ Ինչպէս յայտնի է, ըստ Ագաթանգեղոսի, Գրիգոր Լուսաւորիչը եպիսկոպոս է ուղարկել Անգեղտուն։ Ժամանակագրօրէն այս փաստը համահունչ է Պեւտինգերեան Քարտէզի տեղեկութիւններին[54].

Ինչպէս արդէն նշել ենք, Հայաստանի 387ի բաժանումից յետոյ, Մոփքը (Ծոփաց եւ Անգեղտունի կազմում) մնաց բիւզանդացիներին, իսկ Աղձնիքը՝ պարսիկներին։ Գտնուելով բիւզանդական տարածքում, Տիգրանակերտը զրկուեց Տիգրանակերտ-Արտաշատ եւ Տիգրանակերտ-Մծբին ճանապարհների վերահսկիչը լինելուց։

Այդ շրջանում քաղաքում մնացած շատ հայեր տեղափոխուեցին այլ վայրեր։ Դրա հետեւանքով Տիգրանակերտում ուժեղացաւ ասորական ազդեցութիւնը։

Հենց այդ ժամանակ Տիգրանակերտը սկսեցին անուանել Մարտիրոսաց քաղաք։ Այդ անուանումը ունի կրօնական իմաստ եւ նշանակում է նահատակուածների քաղաք։ Դա կապուած էր Դ-դ. վերջի-Ե-դ. սկզբում ապրող յայտնի սիրիացի եպիսկոպոս Մարութայի գործունէութեան հետ, որը Տիգրանակերտում հաւաքել է քրիստոնեայ նահատակ-զոհերի մասունքները, որը պայմանաւորուած է Դ-դ. 40ականների պարսիկ արքայ Շապուհ Բ-ի կողմից քրիստոնեաների հալածումը։ Այդ

անուանման սիրիական տարբերակն է Մայփերկատ, իսկ արաբականը՝ Մայաֆարկին։

Ցայտնի է, որ Մարութա եպիսկոպոսը խնդրանքով դիմել է Թէոդոսիոս Բ.ին (408-450)՝ ամրացնել Տիգրանակերտ-Մարտիրոսուպոլիսը եւ այնտեղ եկեղեցի կառուցել։ Անաստասիոս եւ Յուստինիանոս կայսրերի օրօք բիւզանդացիները հիմնովին վերանորոգեցին Մարտիրոպոլիս[95] քաղաքի ամրոցի կառոյցները։ Ասորական աղբիւրները ընդգծում են, որ «հռոմէացիների համար այն «ծառայում էր որպէս դարան եւ որպէս ապաստարան»[96]։ Պարսիկները եւ նրանց դաշնակից հոները 532ին «նրա [պարիսպների] դէմ խրամատներ եւ փոսեր փորեցին»[97], սակայն քաղաքը գրաւել չկարողացան։

Ասորական աղբիւրները նոյնպէս վկայութիւններ են բերում Ակրա բերդի մասին, որը պարսիկները կառուցել էին «Մայփերկատի դիմաց, սահմանի վրայ»[98]։ Դրանով նրանք կրկնեցին բիւզանդացիների փորձը, ժամանակին ունենալով պարսիկ Թագաւոր Կաւադի օրօք բերդ կառուցել Thalbasaris-Մեյաֆարղինի բարձունքի վրայ։ Բիւզանդացիները դիմադրում էին պարսիկներին։ Չնայած, որ պարսիկները օգտուելով յարմար առիթից, այնուամենայնիւ կառուցեցին բերդը, մի քանի տարի յետոյ բիւզանդացիները պաշարելով գրաւեցին եւ հիմնովին աւերեցին այն.[99]

Պատմութեան կոնտեքստից երեւում է, որ տուեալ իրադարձութիւնները տեղի են ունեցել Զ. դ. 70ականներին։

Նոյն աղբիւրները յայտնում են մէկ այլ Ակրա բերդի մասին, որը ինչպէս տեսնում է նշւում գտնւում էր հայարզնական երկրում Ազարթուժ»[100]։

Այս հարցում պարզութիւն է մտցնում պատմաբան Հայկ Մելքոնեանը, որը պարզաբանում է, որ Ազաթ էր կոչւում Բաթման գետը[101]։

Ակրա անունով երկու բերդ յայտնաբերելը թոյլ է տալիս տարբերակել բիւզանդացիների եւ պարսիկների սահմանային գծերը։ Պարսկական սահմանը անցնում էր Աֆուժով (Փուժ), Ակրայով եւ Քղիմարով՝ Բաթման գետի աւազանում։ Բիւզանդական սահմաններն էին Կլէյսուրներ, Առուախը, Ձիաը եւ Տիգրանակերտը (Մարտիրոպոլիս)՝ Նիմֆիոս գետի աւազանում։

Երկու Ակրաների եւ երկու սահմանամերձ գաւառների գոյութեան մասին անյայտ լինելը մինչ այժմ էլ շատ հայ եւ արտասահմանցի գիտնականների մոլորութեան մէջ է գցում: Հնարաւորութիւն չունենալով բացայայտելու մանրամասները եւ դրանով իսկ քանդել խճճուած հարցերի հանգոյցը, նրանք նոյնացնում էին Բաթման եւ Նփրկերտ գետերը, իսկ Տիգրանակերտը փոխարինում էին Սիլվանի հետ, որը գտնւում էր Բաթման գետից 9 կմ. դէպի արեւմուտք եւ Տիգրանակերտից 36 կմ. դէպի արեւելք: Ժամանակին որոշ խառնաշփոթ առաջացրին նաեւ [illegible] գերմանացի գիտնականներ Կարլ Լէհման-Հաուպտը եւ Վալդեմար Բելկը:

Մինչ բնագրերով անցնելը, ասենք, Ամիդի՝ Բաթման գետի ճանապարհի երկայնքով ընկած տարածքը, նրանց չյաջողուեց որոշել [illegible] կատարելու ճշգրիտ տեղը:

Ի հաստատումն Տիգրանակերտի գտնուելու վայրի մեր տեսակէտի, մենք պէտք է դիմենք նաեւ միջնադարեան եւ հնագոյն աղբիւրների:

Որպէս օրինակ բերենք Պրոկոպիոս Կեսարացու յայտնի տեղեկութիւնը՝ «Մարտիրոպոլսից դէպի արեւելք, նոյն Հայաստանում, որը կոչւում է Սոֆանենա, Ֆէյս անունով մի տեղ կայ, որը գտնւում է Մարտիրոպոլսից ավելի քիչ քան մէկ օրուայ ճանապարհի վրայ: Այդ վայրից այն կողմ, մոտ ութ մղոն ձգուող անանց լեռները միանալով կազմում են երկու կիրճ, որոնք գտնւում են միմեանցից ոչ հեռու եւ կոչւում Կլէյսուրներ»[62].

Այնուհետ այս կապակցութեամբ գրում է. «Մայաֆարկինից ոչ հեռու, Գինիի եւ Գազրտի միջեւ, մինչեւ այժմ էլ իրօք գտնւում է Փիոսն անունով մի փոքրիկ գիւղ: Նրա հիւսիսային կողմում մի ամբողջ մղոն տարածութեան վրայ գտնւում են հին բերդի վեհապանծ աւերակները, որոնց 1861 թուականին այցելութեան է գնացել Դիարբեքիրի անգլիական հիւպատոս՝ Թէյլորը»[63]: Վերջինս գրում է բազմաթիւ աւերակների մասին, որոնք ծածկում են բլրի լանջը մէկ մղոն տարածութեան վրայ, հաստ պատերի կառոյցների եւ հսկայական տաշուած քարերի չերտերի՝ թափուած ճանապարհին եւ դրանք համարում հնագոյն Ֆիս քաղաքի մնացորդները[64] (Fees բնագրում — Հ.Մ.):

Ըստ ժամանակակից Թուրքական աղբիւրների, այդ տեղը կրում է Ֆիսեան հարթավայր անունը[65]:

Հնագոյն աղբիւրներում, մասնաւորապէս Պլուտարքոսի աշխատութիւններում, ուշադրութիւն են գրաւում որոշակի մանրուքները: Նախ եւ առաջ, դա մատնանշումն է այն փաստի, որ Լուկուլոսը իր ճամբարն է

խոսել գետափի շուրջ հայաբնակ հարթավայրի վրա։ Նաև, այնտեղ գոյություն ունեցող բլրակի մասին, որտեղից տեղագրանականներցիները կարող էին տեսնել և համեմատիցիներին ցույց տալ Տիգրան Բ-ի զորքերի տեղաբաշխման տեղը[96]։

Արդյոք այդ հարթավայրը Ցիսեան հարթավայրը չէ՞։ Եվ արդյոք Պլուտարքոսի բլուրը չէ՞ հիշեցնում Թէյլորի նկարագրած բլուրին։

Փաստերի մեծ խումբը վերաբերում է Պլուտարքոսի այն տեղեկությանը, որ, երբ Լուկուլլոսը յաջորդ օրուայ լուսաբացին ճամբարից դուրս հանեց իր զորքերը, թշնամու զորքերը գտնվում էին գետի արևելյան կողմում։ Բանն այն է, որ Բաթման գետի աջ վտակները հոսում են արևելյան ուղղությամբ, այն ժամանակ, երբ Պլուտարքոսի մոտ գետը հոսում էր դեպի արևմուտք։

Իսկ որտե՞ղ է հարցի լուծումը։ Մեր կարծիքով, դա այն է, որ հայկական և հռոմեական զորքերի միջև գործողությունները (պատերազմները) ծավալվում էին Բաթման գետից արևմուտք գտնվող վայրերում։ Այդ իսկ պատճառով «Պլուտարքոսի գետը» փնտրելիս մենք պետք է հետևենք Գևորգեկյանի Բարակցի տվյալներին, կողմնորոշվենք Բաթման գետի և Ամիդի միջև ընկած տարածքով, նաև այն գետերի, որոնք հոսում են այդ տարածքի միջով հյուսիսից հարավ, հարավ-արևմուտք, Հայկական Տավրոս լեռնաշղթայից Արևմտյան Տիգրիսի ստորին ավազանները։

Եթե դառնենք աշխարհագրական քարտեզներով, նման գետերը այնտեղ մի քանիսն են։ Նրանցից մեկի՝ Թուխ գետի մասին խոսում է աշխարհագրագետ Թադեոս Հակոբյանը։ Նա մասնավորապես նշում է, որ 898-ին Թուխ գետի ափին տեղի է ունեցել ճակատամարտ հայկական և Հյուսիսային Միջագետքի էմիրի զորքերի միջև[97]։

Եթե Թուխը, կամ որևէ այլ գետ, այն գետն է, որի մոտ տեղի է ունեցել Պլուտարքոսի նկարագրած ճակատամարտը, ապա այն պետք է հոսեր Ցիսեան հարթավայրով և կտրելով Բաթման գետից Ամիդ տանող ճանապարհը շարունակվեր մինչև Արևմտյան Տիգրիս գետը լցվելը։ Այդ դեպքում հասկանալի կը լինէր Պլուտարքոսի յայտնած այն միջադեպը, որ Լուկուլլոսի զորքերը անցնելով գետը (խոսքը Նիմֆիոս գետի մասին է – Հ.Մ.) որտեղ ծանծաղ գետանցք կար, և որոշ ժամանակով ճողոպրելով Տիգրան Բ-ի զորքերի տեսադաշտից՝ յանկարծակի յարձակում կատարեցին թիկունքից[98]։

Այսպիսով, համաձայն Պևտինգերյան Քարտեզի, ինչպես նաև հռոմեական և միջնադարյան աղբյուրների տվյալների, Տիգրանակերտը գտնվում էր Արևմտյան Տիգրիս գետի և նրա արևելյան վտակի՝ Բաթման գետի միջև գտնվող տարածքի կենտրոնական մասում, Ամիդից 49,9 կմ. իսկ Բաթման գետից 55,1 կմ. հեռավորության վրա: Քաղաքը գտնվում էր Նիմֆիոս գետից 11,1 կմ. դեպի արևմուտք:

Տիգրանակերտի և Մարտիրոպոլսի քաղաքի նույնացումը հաստատվում է Thalbasaris-Մեյաֆարղին կայարանով. կայարանը գտնվում էր Հռոմեական (Բյուզանդական) կայսրության և Իրանի միջև, սահմանի վրա, որը անցնում էր «Մեյաֆարղինից մինչև Մայաֆարկին (Մարտիրոպոլսից) տարածքով, այսինքն՝ ըստ Պևտինգերյան Քարտեզի Thalbasaris-ից մինչև Tigranocarten:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1 Hewson, Robert H., *Armenia, A Historical Atlas*, Chicago: University of Chicago Press, 2001, էջ 961.

2 Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և Հարակից Շրջանների Տեղանունների Բառարան, հ. 1, Երևանի Համալսարանի հրատարակչություն, Երևան, 1986, էջ 663.

3 Divnik տեղանունը դաշտագրվում է Հիսարին, իսկ Դևնիկ ձևը՝ Տեղանունների Բառարանը:

4 Հակոբյան Թ. Խ., Հայաստանի և Հարակից Շրջանների Տեղանունների Բառարան, հ. 2, Երևանի Համալսարանի հրատարակչություն, Երևան, 1988, էջ 119, 148-149.

5 Iakov Manandian, *O Torgovle I Gorodakh Armenii V Sviazi S Mirovoi Torgovlei Drevnikh Vremen* (Հայաստանի Առևտրի և Քաղաքների Մասին՝ Կապված Հին Ժամանակաշրջանի Համաշխարհային Առևտրի Հետ), Երևան, 1954, էջ 139-143.

6 Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխ. Կ. Ն. Յուզբաշյան, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1963, էջ 74.

7 Manandian, էջ 140.

8 Նիկողայոս Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի Դարաշրջանում. Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1987, էջ 71-72.

9 Նույն, էջ 438-439.

10 Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 4, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1978, էջ 6.

11 Անդ, էջ 74։ Անդեղը հիշվում է Հովհաննես, Սամոսացի և այլ անուն հեղինակների մոտ։

12 «Աշխարհի լեռներ», Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 9, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1983, էջ 201։

13 Hewsen, էջ 65 II-III։

14 Strabon, *Geografia* (Աշխարհագրություն) XI, XIV; Անդ, էջ 25-26, 199։

15 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, թրգմ. ըն. և ծանոթ. Ս. Արևշատյան և Մ. Դա-րբինյանի, ներածությունը, ցանկերը Ա. Բ. Սարգսյանի, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1991, էջ 83։

16 Plin. VI, 12, 6.

17 Խորենացի, էջ 83։

18 Ղևոնդ, Պատմություն, Երևան, «Սովետական Գրող» հրատարակչություն, 1982, էջ 20։

19 Hewsen, էջ 65 III։

20 Հիշեցնենք զանում է որ Միջագետ ... Տիգրանակերտ-Արզանաշատ ... ավելի ... (Hewsen, էջ 65 III)։

21 Անդ, էջ 269։

22 Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թրգմ., առաջ. և ծանոթ. Ա. Գ. Աբրահամ-յան և Գ. Բ. Պետրոսյան, Երևան, «Սովետական Գրող» հրատարակչություն, 1979, էջ 294։

23 Անդ, էջ 268։

24 Տեսնել՝ T. Sinclair, "The Site of Tigranocerta.II," *Revue des Etudes Armeniennes*, 1996, t. 26, էջ 51-117։

25 Օրինակ Sinclair։

26 Hewsen, էջ 65 II։

27 V. G. Lukonin, *Drevnii I Rannesrednevekovii Iran*, (Հին և վաղմիջնադարյան Իրան), Մոսկվա, 1987, էջ 145։

28 Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 8, Ասորական աղբյուրներ, Ա., թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Գ. Մելիքսեթյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976, էջ 44, 45; Հ. Մելիքսեթյան, Աշխարհի Պատմությունը և Հայաստանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980, էջ 194,197։

29 Ժողովուրդների Պատմություն, հ. 3, էջ 45։

30 *Տեղանունների Բառարան*, Հ. 1, էջ 424։

31 Նոյն։

32 Manandian, էջ 176։

33 K. V. Trever, *Ocherki Po Istorii Kulturi Drevnei Armenii* (*Հին Հայաստանի Մշակոյթի Պատմութեան Ակնարկներ*), Մոսկուա, 1953, էջ 253-286։

34 Օրինակ՝ Մուրադխանը, ում ցուցադրված է Հյուսիսը՝ էջ 65 III։

35 *Հանրագիտարան*, Հ. 4, էջ 162։

36 Miller, K., *Itineraria Romana. Romische Reisewege an der Hand der Tabula Peutingeriana*, Stuttgart, 1916.

37 Manandian, էջ 167։

38 Hewsen, էջ 65 III։

39 Յարութիւնեան Բ., *Մեծ Հայքի Վարչա-քաղաքական Բաժանման Համակարգը Հռոմ* «*Աշխարհագրագիտութիւն*», *Տոմ Ա.*, *Արեւելեան եւ Հայաստանի Աշխարհագրութիւն*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 2001։

40 Appiani Alexandrini, *Historia Romana*, Bibl. Teubner, Vol. II, Lipsiae, 1987, Mithr., 67.

41 Յարութիւնեան, էջ 190, 198։

42 Նոյն, էջ 203։

43 *Յունական Աղբիւրները*, էջ 301։

44 Նոյն, էջ 196-197։

45 Սասնոյ ... (*Տեղանունների Բառարան*, Հա. 1, էջ 540)։

46 Յարութիւնեան, էջ 190։

47 Այս անցում մէջ ... (*Tourist's Guide*, Turkey, Ankara, 1963, էջ 77)։

48 *Յունական Աղբիւրները*, էջ 302։

49 Ադոնց, էջ 15։

50 *Յունական Աղբիւրները*, էջ 301։

51 Նոյն, էջ 301։

52 Նոյն, էջ 297, 301, 453, 458։

53 Յարությունյան, էջ 186-187։

54 Ադոնց, էջ 354-355։

55 Նույն, էջ 154։

56 Արաբական Աղբյուրներ, էջ 302։

57 Նույն, էջ 302։

58 Նույն, էջ 459, 460։

59 Նույն, էջ 459։

60 Նույն, էջ 198, 409։

61 Նույն, էջ 409, 198։

62 [illegible] Հայկական Տավրոսի [illegible] գտնվող անցուղիների մասին է, որոնք կոչվում են կլեյսուրներ։

63 Ադոնց, էջ 21։

64 Նույն, էջ 21, ծանոթ. 2։

65 *Tourist's Guide*, էջ 77։

66 Plut. Lucullus, XXVII։

67 Հակոբյան Թ., «Տիգրանակերտ», Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 9, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1983, էջ 407-408։

68 Ի նշան Լուկուլլոսի [illegible] (հաղթական) անունը։

## TABULA PEUTINGERIANA: NEW DATA ON THE ROUTES PASSING THROUGH ARMENIA AND ASIA MINOR

(Summary)

HMAYAK MARTIROSIAN

The article discusses the location of various stations named on the Artashat-Satagh (Satala) route depicted on Tabula Peutingeriana, the famous the fourth century A.D. Roman roadmap. Hmayak Martirosian agrees with Robert Hewsen's identification of Datamissa with the village of Berdag. Following Hewsen's identification of Zeracana with Nihorakan, Martirosian provides additional data from other sources, like Anania Shirakatsi and a number of medieval Arab authors (quoted by Nicholas Adonts) to support this view. Martirosian argues that the roadmap's Artashat-Tigranakert (Tigranocerta) section, which ceased operating in 387 A.D., has not been studied in full. The author disagrees with Babken Harutiunian, who places Tigranakert near the river Kharzan.